

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ԿՈՒՍԱՆԱՅ ՎԱՆՔԻ ՄԱՅՐԱՊԵՏ

ԵՒԵՐԱՍԵՐԿԱՆԻՆԻ ՓԵՐՈՐՏԻՆԻ ԽՈՒՐԵՆՆԵՐԻ

Թողումը տեղի կունենայ ամսի 24-ին, շաբաթ օրը, խորհրդանշի եկեղեցու գաւթում
ս. պատարագից յետոյ, որ լինելու է նոյն օրը առաւօտեան ժամը 10-ին Կուսանաց
վանքի ս. Ստեփանոս եկեղեցում: Ամբիթները ամենայն օր երեկոյեան ժամը 6-ին:
Իսկ ուրբաթ երեկոյին ժամը 4-ին մարմինը կը տարվի եկեղեցի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անդրկովկասի մասնակցութիւնը համաշխարհային
ցուցահանդէսում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՆԻ
ԹԻՒՆԻ. Կատարելով իր դասախոսութիւնը. Նաւ-
թարգիւնարներու մասին XVIII-րդ համագումար
ժողովը. Մեր բարբերից. Նամակ Բաթումից.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒՆԻ. Կ.
Պօլսի լուրերէն. Հեռուոր Արեւելքում. Ար-
տաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՆ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի բուռը
մոխիր:

ԱՆԳՐԱԿՈՎԿԱՍԻ ՄԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՆ-
ՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՒՅԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ներկայ 1904 թուի մայիս ամսին պէտք
է բացվի Ամերիկայում համաշխարհային
մի մեծ ցուցահանդէս, որը իր ընդարձա-
կութեամբ պէտք է գերազանցէ մինչև
այժմ եղած ցուցահանդէսներէն: Անդր-
կովկասն էլ մի որոշ աստիճանով պէտք
է մասնակցէ այդ ցուցահանդէսին: Այս
օրերս զէպի Ամերիկա կողարկվին Անդր-
կովկասից մեծ ժողովածունք վերաբե-
րեալ անայնադործական, գիւղատնտեսա-
սական և հանքագործական արդիւնազոր-
ծութիւններին:

Համաշխարհային ցուցահանդէսը տեղի
կունենայ Ամերիկայի Մեն-Նուի քաղաքում
և կը բռնէ մի մեծ տարածութիւն, որ մեր-
ձաւորապէս պէտք է կազմի 400 գետեա-
տին: Այդ ցուցահանդէսը գրաւել է զէպի
ինքը եւրոպական բոլոր պետութիւնների
յատուկ ուշադրութիւնը և ամենքը աշ-
խատում են այնպէս կազմակերպել իրանց
բաժինները, որպէս զի կարողանան ուժեղ
տպաւորութիւն գործել և ապագայ առե-
տրական յարաբերութիւնների մէջ պատ-
կանելի գիրք ստեղծել իրանց համար:

Անդրկովկասը ուղարկում է այնտեղ մի
քանի հարիւր նմուշներ իր արդիւնա-
գործութիւնից, յոյս ունենալով, որ
ցուցահանդէսի ուսումնասիրութեան նու-
իրով անձինք ուշադրութիւն կը դարձ-
նեն կովկասեան իրերի վրա և ապագա-
յում որոշ առեւտրական յարաբերութիւն-
ներ կը ստեղծեն մեր երկրի և Ամերի-
կայի առեւտրականների մէջ:

Պէտք է նկատել, որ վերջին տասնեակ
տարիներում իրապէս սկսվել են յարա-
բերութիւններ Ամերիկայի և մեր երկրի
մէջ: Կովկասից ուղարկվում են Ամերիկա
մարզանէց, բուրդ, գորգեր, ասիական
գործուածքներ և ուրիշ իրեր: Ամերի-
կացիները սկսել են հետաքրքրվել մեր
հացաբոյսերով և մրգերով ու տեղեկու-
թիւններ են ժողովում մեր արդիւնազոր-
ծութեան մասին: Պէտք է նկատել, որ
Ամերիկայի վերջին ժամանակներս, շուր-
հիւ Ամերիկա գաղթած հայերի, սկսեց
առեւտրական յարաբերութիւններ ստեղծել
Ամերիկայի և Փոքր-Ասիայի մէջ: Իսկ
որովհետեւ Փոքր-Ասիան իր արդիւնազոր-
ծութեամբ շատ նման է Կովկասին և
Պարսկաստանին, ուստի Ամերիկայի հա-
մար Մերձաւոր Արեւելքը սկսում է ստանալ
լուրջ առեւտրական և արդիւնազործա-
կան նշանակութիւն:

Անշուշտ անհրաժեշտ է այդ սկսվող
փոխանակութեան մէջ աշխատել գրաւե-
լու որոշ զինք և գիտակցական կերպով
կազմակերպելու առեւտրական յարաբե-
րութիւնները, որպէս զի մեր երկրի
շահերը պաշտպանված լինեն արժանաւոր
կերպով:

Մենք դարձեալ առիթ կունենանք խօ-
սելու այս առարկայի մասին:

Գիւղացին զգուշիկ կատարելութեան է հաս-
ցել յիշողները: Պետք է դրողով պատմեց
մեզ այն բոլոր կեդրերը, որոնք դուրս էին
թափվում ոչ միայն փեսայի, այլ և նրա օգ-
նութեան հասած ծնողների բերանից: Բայց
ծերունին ուշադրութիւն չը դարձրեց յիշողների
վրա, այնքան էլ բաւական էր, որ հայտնի-
ները քիչ հեռու էին պահվում: Նա արձակեց
Մարթայի կապիւրը և երբ խելոյ նուազած,
ուշաթափ, դիակի նման ընկաւ հօր գիրկը,
հայրը ամուր սեղմեց նրան իր կրծքին և ա-
սաց հաստատ ձայնով. «Մի վախիր»...

Եւ յետոյ, այլ ևս քաջ չը կորցնելով, նա
աղջկան գրկած տարաւ զէպի այգու մոտը:
Ի՞նչու աշխատում էին կտրել նրա առաջը: Փե-
սայի հայրը նոյն իսկ փորձեց կոշ անել իր
խնամուկ խելոյի ու հասկացողութեան: Պաշտ-
պանել մի շան,—ինչ խելոյ է: Երբ մի կին իր
օրինաւոր ամուսնուն չէ սիրում, նշանակում
է որ նա ուրիշի հետ է. այսպէս էր ամենքի
համոզմունքը, այսպէս էր ասում նոյն իսկ
փեսայի մայրը: Վերջին ստակի հարուստը
գալիս էր փորձելու նախապետական փրկա-
փային: Բայց նրա ձեռքերը չը դողային, գրկած
գիւղիկ վայր չը գցեցին իբրեւ մի ապականու-
թիւն, կեղտ: Հայրական սիրտը զգաց, որ
մարդկային շարունակութիւնը չափազանց սանձա-
ռակ է դարձել: Զգաց, որ մարդը ու ամբիթ է
իր գաւազը: Պետք է օջախի մի բուռը մո-
խիւրը կարող էր շատ անբախտ լինել, բայց փշա-
ցած, ցեխոտ ու վաճառվող,—այդ երբէք չէր
լինի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՆԻՆ

ԿԱՍՊԵՐՈՎԻՋԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ

Յունվարի 17-ին Արտիստիքական ընկերու-
թեան դահլիճում տեղի ունեցաւ պ. Կասպե-
րովիչի հրապարակական դասախոսութիւնը
«Նորագոյն գեղարուեստի» մասին:

Նիւթը հետաքրքրական էր, իսկ վերնագիր-
ները գրաւիչ, կախարդող—գեղարուեստութիւն,
սիմվոլիզմ, իմպրեսիոնիզմ և այլն... Հէնց այդ
հմայով վերնագիրներն էին, որ հաւաքել էին
երկու սեռի անազին բազմութիւն:

Պ. դասախօսը նախ համառօտակի պատմեց
գեղարուեստի պատմական զարգացումը, յետոյ
անցաւ նորագոյն գեղարուեստին:

Արեւելքը միայն ընդօրինակում էր, նա մի-
այն ճանաչում էր լուի նիւթը, մարմինը: Ա-
րեւելեան գեղարուեստի մէջ պարուն համարում
է Ենովայի գաղափարը իբր հոգու առաջին
արտայայտութիւն:

Յունական գեղարուեստը մարմնացում է ձեւի,
ներդաշնակութեան, բայց հոգի նա ևս չէր
կրում իր մէջ:

Որովհետեւ հոմէական գեղարուեստն արտա-
յայտում է ոչ ոք, մարմնացում է եռանդ և
անյողողող տրամաբանութիւն, պ. դասախօսը
մի կողմ թողեց—չը յիշատակեց անգամ նրան:
—Ինչու:—Որովհետեւ նա բանդում էր իր սիս-
տեմը, իր ստեղծած թխովի ֆորմուլան:

Միջին դարերը մտցրին հոգին գեղարուեստի
մէջ, բայց արհամարհեցին ձեւը: Վերածնութիւնը
աշխատեց հաշտեցնել յունական հրաշափո-
ղութիւնը, ներդաշնակութիւնը և միջնադարեան հո-
գին, անհուն էկզալտացիան: Այդ հաշտեցնող
ուղղութիւնը տեղեւ մինչև XIX դարի վերջին
բառը:

Նորագոյն գեղարուեստը ձգտում է այժմ
զէպի ոչ միայն հոգին, այլ և «նոգու ոգին»: (!?)

Այդ անվերջ խորութեան, այդ հոգուն ձգտող
գեղարուեստն է, որ կոչվում է գեղարուեստու-
թիւն, իսկ նրա ձևակերպումն է սիմվոլիզմ (?):

Դեկարտականութիւն գեղարուեստի մէջ նշա-
նակում է ձգտում զէպի լայն և խոր, անհուն
մըրճում հոգու, բացարձակի, անսահմանի...
(Թէ կարող էր հասկացնէ !)

Դասախօսը երկու կանգ առաւ սիմվոլիզմի
վրա: Որոշ գոյներ մարդու մէջ ծնեցնում են
որոշ ուրախութիւն, որոշ տոնքի գաղափարը. ո-
րոշ ձայներ մարդու ներկայանում են որոշ

գծերի ձևով, իսկ որոշ գոյներ, ձայներ կամ
գծեր ծնեցնում են մարդու հոգու մէջ՝ օրինակ՝
թախիծ, զուարճութիւն և այլն:

Ահա այդ որոշ երևոյթներն այս կամ այն
անհատի հոգու մէջ զարթեցրած որոշ մտա-
պաշարների վրա է հիմնում դասախօսը սիմ-
վոլի և սիմվոլիզմի ծագումը:

Դասախօսութեան լեզուն երբէք «հասարա-
կական» չէ.—նա մատչելի էր դահլիճը լցնող
բազմութեան երեք քառորդի համար. միշտ
«Երեւոյթին», ճոռոմական՝ ամպոտ լեզուով էր
խօսում պարոնը, հեղեղելով անվերջ ածա-
կաններ...

Դա մի անկողնական քննադատութիւն չէր
ոչ գեղարուեստի մէջ և ոչ էլ սիմվոլիզմի,
այլ մի անվերջ գովեստ, մի սիմվոլիստական
պրօպագանդա: Գիտականը՝ «բոլորաշնորհ»
պէտք է մի քիչ անկողնական լինի և ոչ նեղ
կուսակցական:

Դասախօսութեան մէջ սկզբից մինչև վերջը
չեղում էր հոգի, միջի եւ մարմին այնպիսի
նեղութիւն կուսակցականութեամբ, որ յիշեց-
նում էր միջնադարեան սքոլաստիքան և փոստ
միտաֆիզիքական վէճերը:

Ամբողջ Յիշ ժամ տեղ դասախօսութեան
ամենահետաքրքիր մասն էր Եօպինի հրաշալի
H-moll Scherzo-ի նուագումը, որ մեծ աջողու-
թեամբ կատարեց տ.Այգնշտարտը:

Պէտք է աւելացնել, որ դարմանալի անհո-
գութեամբ էր վարվել պ. դասախօսն իր խոս-
տացած մոզական լապտերներով ցոյց տրվելի
պատկերների վերաբերութեամբ. դահլիճը մըթ-
նում է և անազին էկրանի վրա ձեղ երևում է
մի խաւար ու խառնաշփոթ աղօտ լոյս... Առա-
ջին կարգի հիւրերն անգամ ոչինչ չէին ջո-
կում, ուր քնաց վերջին կարգերը: Զը պէտք է
այդպէս խաղալ հասարակութեան հետ...

Մասակ

ՆԱԽԹԱԳԻՒԹԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ XVIII-Ի ՀԱՄԱ-
ԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ

III

Ժողովի քննած խնդիրների մէջ առաջին
հետաքրքիր տեղը բռնում է արտասահման ար-
տահանող կերտերի տեղափոխելու սակագինը
բարձրացնելու հարցը, այսինքն կերտերի Բագ-
ւից զէպի Բաթում և Նովորոսիսկ տեղափո-
խելու վճարը բարձրացնելը: Ինչպէս յայտնի
է, միմիայն այդ ճանապարհներով է կերտերն
և զանազան հանքային իւղերը արտասահման

նեղձ, նա այժմ համարեա մոռացել էր իր
վէրքն ու ցաւը, նրա տանջված դէմքի վրա ի-
ջել էր մի գեղեցիկ խաղաղութիւն: Նա, կարծես,
այլ ևս ոչինչ սպասելիք չունի այս աշխարհից:
Ամբողջ ճանապարհին ծերունին չը համար-
ձակվեց խօսեցնել Մարթային Նա այժմ քաշ-
վում էր իր երեխայից, զգում էր, որ նա իրա-
նից շատ է բարձր ու արդար:

Ուշ երեկոյեան նա հասաւ տուն:
—Ինչեք մինչև լոյս չըքնեցի, ասաց նա.—
գիշերը մինչև լոյս դադար չունիլն անկողնիս
մէջ և լուռ արտասանեցնել էր թափում:

Այնպիսի մի օրից յետոյ—հասկանալի է:
Ի՞նչպէս բնիկ, Բնիկ լաց չը լինել: Մարդը
ընկել էր մի բոլորովին նոր աշխարհ, ուր տես-
նում էր, թէ որքան անընկճելի է մարդու հո-
գին: Մինչև այդ նա, իբրեւ ժողովրդի հաւատի
ու հասկացողութիւնների խելօք ու անխախ-
տ պաշտպան, հաւատացել էր, որ մարդու վրա
իշխում են հացը, ջուրը, օջախը, պապերի
խօսքը: Բայց տեսաւ, որ իշխում է սիրտը:
Կտրված սիրտը մի ջարդված ապակի է, նո-
րից միացնել նրա մասերը անկարելի է...

Եւ խօսք սկսեց իր նախնի պաշտամունքների
մասին, յիշեցրել թէ ինչ էի ասել նրանից բա-
ժանվելիս: Ծերունին նայեց ինձ արտասուկից
աչքերով, և ցոյց տուեց շրջապատող աշխարհը:
Նա ուզում էր ասել, թէ ամենքն այդպէս են:
Հացը, ի հարկէ, հին մեղքն էր: Մարթան
գետ ազատված չէր: Դժուարութիւնը դեռ նոր
էր սկսվում: Փեսան պահանջում էր, գանգատ-
ներ է ներկայացնում: Ի՞նչ անել: Ո՛չ մի տեղ,

տեղափոխվում և այդ միջոցներով տեղափոխութեան պուրջը արժէ 16 կոպէկ: Այժմ, Պետերբուրգում, կառավարական շրջաններում գիտաւորութիւն ունեն այդ գիշեր բարձրացնել և, առիթից օգտվելով, նաւթարդիւնաբերութիւնը խորհուրդը հետազոտող թոյլութիւն ստացաւ ժողովի պարագայութեան մէջ մտցնել և այդ հարցի բնութիւնը և գեղեցիկները 20-ի ժողովը ամբողջովին նուիրելուց այդ խնդրին:

Նախ քարտուղարներէ մէկը կարգաց մի գեղեցում, որ չիմացվեց, թէ ում կողմից է ներկայացվում: Այդ գեղեցումն մէջ անյայտ հեղինակը ծանօթացնում է երկաթուղային տարիքի պատմութեան հետ, որը սկսվել է 1839 թի յունվարի 15-ից և այդ ժամանակամիջոցում 8 անգամ այս և այն փոփոխութեան ենթարկվել, երբեմն ցածրացել, երբեմն իջել է և ամենացածր ժամանակը հասել է 9 կոպ., իսկ ամենաբարձրը—17 կ., այժմ կանգնած է 16 կոպէկի վրա:

Գլխավորապէս այդ հանգամանքին պէտք է վերագրել կերօսին արտադրութեան չարաբատարի պատմութիւնը: Այդ արտադրութիւնը մինչև այժմ էլ մի շարք է կերօսի նազործներին համար, որովհետև շնորհիւ նրա անկայունութեան, շատերը անկարող են լինում ձեռնամուկ լինելու արտադրութեան գործին, որովհետև հաստատ չը գիտեն, թէ այսօրվայ 16 կոպ. տարիքը վաղը չէ դառնալու 25 կոպ. և կտրելու բոլորի մէջը: Այդ իսկ խոռոչի գրութիւնից օգտվում են միմիայն նաւթային թաղաւորները, որոնց մէջը հնչում—հայտնի չի կտրուի և որոնք կարող են դիմանալ շատ փորձանքների, թէև, ի հարկէ, սրանք էլ կուզենային, որ տարիքը բարձր չը լինի:

Շնորհիւ այն բանի, որ տարիքը դիցուր 1803 թվին հաւասար է 16 կոպ., իսկ կերօսինի պուրջը արժէ 7—8 կոպ., Բագուի գործարարները այդ պարզ վնասը հասնում է 515,728 ռ., իսկ այդպիսի խոշոր վնասի շատերը չէին կարող դիմանալ:

Այդ խնդրի առիթով խօսեց պ. Ս. Լիանօզեան՝ փոքր կերօսիւնագործների ներկայացուցիչների մէկը. նա մանրամասն և ճշգրիտ կերպով նկարագրեց վերջին տարվայ աւետարական դժբաղդութիւնները, նաև թիւք ձախող արտադրութիւնը և արտադրութիւնը ծառ մէջը երկ կտրուեցին այդ ժամանակամիջոցում, շատ իրականութեան կտորներ անդունդ գլորվեցին այդ չարաբարդ 2 տարվայ ընթացքում, և հագիւ երկու ամիս է ինչ նաւթի գինը բիշաւ բարձրացել է—արդէն Պետերբուրգում մասածում են տարիքը կերօսինի վրա բարձրացնել: Դեռ այնքան ժամանակամիջոց չէ անցել գինը բարձրացնելուց յետոյ, որ կարելի լինի որոշել, թէ որքան հաստատուն են այդ խաբուսիկ գները:

Պարոնի կարծիքով, այդ ժամանակաւոր բարեկամող տրամադրութիւնը կարող է անյայտանալ նոյնպէս անսպասելի կերպով, ինչպէս անսպասելի կերպով նա երևան եկաւ, և այն ժամանակ, եթէ նաւթարդիւնաբերողները 16

կոպ. փոխարէն տեսնեն, դիցուր, 26 կոպ. տարիք, —նրանք հոգեց հոգի կը կորչեն: Չէ կարելի այնպիսի արդէ հնթադրութիւններ անել և վճիռներ կայացնել,—քանի որ նաւթի շուկան գտնվում է ամերիկական Ստանդարդի և նրա մօտը լինելու նման համախոհների ձեռքում, որոնք անագին թուով մանր արդիւնաբերողներին և ձեռնարկողներին խաղաղ են դարձրել իրանց ձեռքում:

Եւ երեք տարվայ ընթացքում, երբ մէկ մէկու յետևից գլորվում էին կերօսիւնագործները, բանվում էին բազմաթիւ տներ—Պետերբուրգում աւելորդ համարեցին Բագուի բօրային խորհրդակցութիւն նշանակել—բացատրելով, որ կրիվիւր խոշոր արդիւնաբերական ձեւերի համար սովորական բան է, որ նա կանցնի և իր յետևից կը բերէ արեգակի ճառագայթներ: Կեսնքը շատ խիստ և դառը կերպով հերքեց այդ անհիմն կարծիքը: Մինչև սեպտեմբերի վերջը աներեսութեամբ թագաւորող կրիվիւր յանկուծ ճակատներին սկզբնական թուլացաւ և սկսեց սխառեմաւորաբար բարձրանալ նաւթի, կերօսինի և մնացածների գինը: Ինչ էր պատահել, նոր շուկանք էին բացվել.—ոչ:

Այդ փոփոխութեան պատճառը, գեղեցանողի կարծիքով, այն էր, որ սեպտեմբերից յետոյ մեր շուկայում երևան եկաւ առաջին անգամ անգլո-ամերիկական կերօսին արտադրող ընկերութիւնը, որը մինչև այդ ժամանակ, մի յայտնի պայմանի շնորհիւ մօտը լինի հետ,—նա իրաւունք չուներ Բագուից դուրս Կովկասում կերօսին գնելու, հետևաբար ողորդ Բագուի գնից: Այդ պատճառով Բագուի գործարարները, անկարող լինելով Բագուի արտադրութեան իրանց արդիւնքները, չնչին, անձեռնու գներով վաճառում էին իրանց ապրանքը մօտը լինողներին, իսկ սրանք իրանց ուղած գներով Բագուում յանձնում էին այդ ամերիկական ընկերութեանը: Եկաւ սեպտեմբերը, յիշեալ ընկերութիւնը չուզեցաւ նորից կապվել այդ դժոխային պայմանի հետ, իրան ազատ ու անկախ զգաց և անձամբ սկսեց գնել Բագուի շուկայից: Դրա շնորհիւ բօրայում կենդանութիւն տրեց, գները սկսեցին բարձրանալ և իրերի գրութիւնը փոխվեց: Այսպիսով ազատ մրցում սանդղից մի կողմից մօտը լինի արտադրող ընկերութիւնների, իսկ միւս կողմից ամերիկական Ստանդարդի հետ:

Այդ մրցումն էր, որ 1½—2 ամսվայ ընթացքում կտրեց Բագուի երեք տարվայ կրիվիւր գլորելը: Իսկ քանի որ այդ այդպէս է—ասում է պ. Լիանօզեանը, քանի որ մեր շուկայի բաղդը կապված է այդպիսի պատահարներից և մեր կրիվիւր արդիւնք է օտար արտադրողների համաձայնութեան,—հասկանալի է, որ կրիվիւր բնական հետևանք չէ իրերի գրութեան: Եւ քանի որ այդ գրութիւնը դեռ գոյութիւն ունենայ, քանի որ տեղական առևտրականները հնարաւորութիւն չեն ունենայ իրանց արդիւնքները վաճառելու սպասման տեղում, այլ ձեռքէձեռք պիտի անցկացնեն,—մինչև այդ նաւթային շուկայի գրութիւնը

միշտ կը տարբերվի: Հարկաւոր է հնարաւորութիւն տալ ազատ մրցման, հարկաւոր է այնպիսի պայմաններ ստեղծել, որ շատերը կարողանան իրանց ապրանքները արտահանել,—իսկ դրա համար տարիքը ոչ թէ բարձրացնել է հարկաւոր, այլ ցածրացնել: Այդ իսկ պատճառով կառավարութիւնը, եթէ կամենում է որ տեղական նաւթի բաղդը ազատ մնայ զանազան փոփոխութիւններից, պէտք է հնարաւորութիւն տալ տեղական արտահանող ընկերութիւններ կազմակերպելուն, չը պէտք է բարձրացնէ տարիքը և զբաւական պէտք է տալ,—որ այդ տարիքը երկար ժամանակ անփոփոխ կը մնայ:

Ռ. Յովհաննիսեանց

ՄԵՐ ԲԱՐՔԵՐԻՑ

Անցեալ դեկտեմբերի 5-ին Թիֆլիսի ժողովարանում նշանակված էր նոր անդամներ ընտրութիւն:

Ի միջի այլոց, ժողովարանի անդամ լինելու ցանկութիւն էին ունեցել և մի քանի արհեստաւոր մարդիկ: Այդ հանգամանքը դուր չեկաւ ժողովարանի յարգող անդամներից մի քանիսին և առիթ տուեց թեր և դէմ խօսակցութեան: Դժգոհ անդամները այնքան յափշտակվեցին, որ վստահութիւն ունեցան առանց գոյնի փոփոխութեան անելու. «Ժողովարանը, պարտնենք, մի մոռանաք, որ անցեալում ազնուականների ժողովարան է կոչվել, դուք այսօր նրան կոչակարներով էք լցնում...»: Այդ դեռ հերքեց չէ.—«...Մեզ համար միանգամայն անպատուաբեր է, պարոններ, գիշերները բիթ բիթ կ'ազատ վերջէլանա խաղալ այն մարդկանց հետ, որոնց ցերեկով մեր տկուր ոտն ենք մեկնել չափսը վերցնելու...»

Ճշմարիտն ասած, մեզ դեռ հարկաւոր է շատ կրթվել: հասկանալու համար, որ մարդկային արժանաւորութեան զբաւակնում արհեստը չէ: Եղեք գող, վաշխառու, խաբեղալ, քաւ, անապիւն, շուկէր, ինչ որ ուզեց, մինչև անգամ յիմար, մեր հասարակական կեանքում այդպիսի բաներ քննութեան չեն առնվում, այդ յատկութիւններով դուք ոչ որեւէ վերաւոր, բայց լինել արհեստաւոր... դա ուրիշ խնդիր է, այդ վկայակնով դուք յարգանք չէք գտնի:

Արհեստաւոր է, ձգտում է ուղի ելնել, մեր կրթված մարդկանց, շրջանը մտնել, բան սովորել. իսկ մենք փոխանակ խախտուելու, օգնութեան ձեռք մեկնելու, օրինակ ծառայելու, ողորդ խիղճ, ցեղին ենք կոխում ասելով՝ դու արժանի չես մեր շրջանը մտնելու, քո ներկայութեամբ մեզ կեղտոտուելու...

Ի պատիւ ժողովարանի անդամների մեծամասնութեան և ի միջիթարութիւն դժգոհ փոքրամասնութեան՝ այդ մարդիկ ի հարկէ, ընտրվեցին, սակայն փաստը մնում է փաստ, որ դարերից ի վեր մեր մէջ մարմին և արիւն դարձած ինտելիկտներից բոլորը կեղտոտ վերջում համար մեզ հարկաւոր է դեռ շատ կրթվել...

Յովհ. Ամբասեան

ՆԱՄԱԿ ԲԱՔՈՒՄԻՑ

Յունվարի 15-ին

Երէկ, յունվարի 14-ին, քաղաքային տան մէջ տեղի ունեցաւ վրացիների սովորական երեկոյթը՝ «Լրաց ժողովրդի մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան» օգտին:

Թէև չէնք զարգարված էր շատ շքեղ, բայց և այնպէս բովանդակութեան կողմից կարելի է ասել ոչինչ էլ չը կար վրացիական Բացի մի քանի վրացիական աննշան պարերից—լեզուիկա և այլն, բոլոր ժամանակ ժողովրդին զբաղեցնող միակ բանը եւրօպական պարն էր, որը սակայն չէր կարող այնքան էլ հետաքրքրել լինել մեծ մասամբ միջին դասակարգին պատկանող հասարակութեան համար:

Ի նկատի ունենալով նպատակի բարձրութիւնը, ի հարկէ, ցանկալի չէր, որ այնքան նեղութիւններով ձեռք բերված գումարները դո՛ր գնային մասնաւոր անհատներին գրպանին, ինչպէս, օրինակ, անցած տարիները լինում էր, որ մի Արուստ-Բաղի բերելու համար 300 ռ. էր վճարվել, մի եւրօպական երգչի Թիֆլիսից բերելու համար գրեթէ նոյնքան և այլն, բայց և այնպէս այն էլ ցանկալի չէր, որ երեկոյթը բոլորովին դուրս լինէր գէթ լոկ վրացիական բնաւորութիւն կրող բաներից—խմբական երգերից, ժողովրդական պարերից, ներկայացումներէից և այլն:

Երեկոյթը սպասված աշողութիւնը չունեցաւ մանաւանդ և այն պատճառով, որ այդ երեկոյթն արտօնում ուսերէն ներկայացում կար նշանակված կրասովի խմբի կողմից, որին մասնակցում էր յայտնի դերասանուհի տ. Կոմիսարովսկայա: Ձը նայելով, որ տոմսակներին գները գրեթէ կրկնակի կերպով թանկացրված էին, բայց և այնպէս տեղիս ինտելիգէնտ հասարակութեան համարեա թէ մեծ մասը այնտեղ էր գնացել:

Երեկոյթը անցաւ շատ խաղաղ և լուսաղէմին հասարակութիւնը սկսեց ցրվել դէպի իրանց տները, թէև, ինչպէս բիշ վերը ասացինք, ոչ այնքան գոհ սրտով:

Գ. Դրեգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք ստացանք Պարիզից «La Musique du Caucase»—«Վովկասի երաժշտութիւնը» վերնագրով մի փոքր բրօշուր: Դա մի ձառ է, որ Թիֆլիսից Վասիլ Դօրգանեան կարգացել է երաժշտութեան միջազգային ընկերութեան Բերլինի բաժնում, շօշափելով հետեւալ կէտերը—երաժշտութեան օրինաւորվումը, կովկասեան երաժշտութեան ուսումնասիրութեան կարևորութիւնը, մի քանի տեղեկութիւններ կովկասի ազգերի ազգաբնութիւն և պատմութեան մասին, հայերի և վրացիների կրօնական և աշխարհական երաժշտութիւնը, ապագայի խնդիրները:

Այսօր, երեքշաբթի, յունվարի 20-ին, վրաց գերաստանական խումբը կը ներկայացնէ վրա-

հոգեւոր թէ մարմնաւոր իշխանութիւնների առաջ, այդ հարցը մնում է հարց: Կօնստանտնուպոլիս խրատում է գնալ, միասին հաշտ ապրել, ոստիկանութիւնը նոյնպէս այն մտքով է հասկանում օրէնքը, որ տղամարդ ու կնիկ միասին պիտի լինեն և ազատութիւն տուող տղամարդը պիտի լինի և ոչ թէ կնիկը:

Ի՞նչ անել: Ծանր լուսթիւն տրեց: Մենք նայում էինք իրար երեսի, մենք գիտէինք, թէ ինչ կը լինէր ամենից արդար, բայց չը գիտէինք, թէ ինչպէս հասնենք այդ արդարութեան: Ամեն ճանապարհ փակված է: Ընկերիս խորհրդին դիմեցի, բայց նա չը գիտէր մի բան, որ մեզ յայտնի չը լինէր. նա միայն կրտեց յօնքերը և հագիւ լսելի ձայնով արտասանեց.

—Այսպիսի տեղն անգամ ազատ չէ մնացել այդ անիծած հարցից:

Այն, կեսնքի զարգացած, բարդ պայմաններ չը կան դեռ այս խուլ, լեռնոտ աշխարհում: Եւ սակայն այստեղ էլ, երկրից և մարդկանցից մոռացած այս անկիւնն էլ տանջվում է այն մտքի վրա, թէ ինչ անել: Բոլորովին անհաւատալի է թուում, բայց այդպէս է շնչուողը յուլիսեան խեղդող ասթիւն դէն է դնում մանդաղը ոչ թէ ճակատի ըրտիւնը սրբելու համար, այլ որպէս զի մի բանի քովէ աշխարհում ունենայ տանջելու իր ուղիղը, թէ ի՞նչ պէտք է անել... Նոյն իսկ այս ծերունին, որին կեսնքը սովորեցրել է ամեն ինչ հաշտեցնող, ամեն գրութիւն արգարացնող, ամեն գրկանք ու դժուարութիւն լաւատեսութեամբ մեղմացնող փրկի-

սօփալութիւն,—նոյն իսկ նա էլ դառն փորձով, հոգեկան սարսափելի ցնցումների միջոցով հասնել էր այն ճշմարտութեան, որ մարդը մի բուռը մոխիր չէ, որ մարդը մարդ է, և նրա մէջ մի բուռը կրակ կայ: Այնուամենայնիւ, ինչ որ Բագուից է աւելացնում, արտասուքներ լնել էր և կանգնեցնում, բայց միշտ անուշ ծիլի է մնում, թէ ինչպէս պէտք է այդպէս լինի, ո՞ւմ են հարկաւոր այդ տանջանքները:

Ի՞նչ անել: Քաղաքներում կամաց-կամաց գոնէ այն հնարաւորութիւնն է մտնում, որ օրէնքով միացած, բայց սրտով իրար ատող ամուսինները հեռանում են իրարից: Այստեղ այդ էլ անկարելի էր: Մարթն մեծ ուրախութեամբ, գոցէ ընդ միշտ, կը զրկէր իրան ամուսնութեան քաղցրութիւնը ճաշակելու մտքից. բայց կար տղամարդի պատիւը, կար այն հասկացողութիւնը, որ տղամարդը փափախ է ծածկում ար գլխին: Այդ պատիւը չի նսեմանայ, եթէ տղամարդը ամեն օր կ'ազի կնոյն ծառին և բաժնով ծեծէ, բայց խայտառակութիւնը կատարեալ կը լինի, գետինը մոռնելը՝ անխուսափելի, եթէ մէկը հրապարակի մէջ հարց նետէ նրա ճակատին, թէ ո՞ւր է կինը:

Պետրոսի փեսան ստտիկ բարձր էր գնահատում իր պատիւը, ուստի ամեն կերպ աշխատում էր տանի իր կնոյնը: Մի քանի անգամ նա դիմել էր կողմից ոյժի, մի քանի անգամ փորձել էր ծեծ ու մահակով վերջացնել ամեն ինչ: Բայց իբրեւ: Ամեն անգամ նրա առաջին էր դուրս գալիս ծերունին և իր կուրծքը դը-

նում հարուածների տակ: Մարթային կարելի էր քաշել, տանել միայն նրա դիակի վրայով:

Մենք նստած էինք լեռան բարձր լանջին և մեղանից ցած, դէպի հարաւ, տարածվում էր ալիքանման լեռնադաշտը: Պետրոսը ամեն անգամ, երբ վրդովմունքից ընդհատվող ձայնով խօսում էր իր փեսայի արարքների մասին, աջ թևը ջղաձգաբար մեկնում էր դէպի լեռնադաշտը: Այնտեղ ոչինչ չէր երևում, այնտեղ արևն էր պայծառ լոյսեր փռում մինչև կապոյտ հորիզոնը, բայց այնտեղ էր փեսայի գիւղը, և Պետրոսը դողում էր, նրա աչքերի մէջ մի չարագուշակ կրակ էր վառվում: Եւ երբ մենք, երկուսը դէս ու դէն ընկնելուց յետոյ, մի բան չը կարողացանք ասել, նա վեր կացաւ և ասաց.

—Այս գործը արեւնով պիտի լուսացվի: Ուրիշ ճար չը կայ...

Ինձ շանթահարեց այդ միտքը, մանաւանդ այն եղանակը, որով նա արտայայտվեց: Ի՞նչ էր դուռը իմ խեղճ, բարի ծերունին: Արիւնի հոտ, և նրանից... Եւ լեռնաւանդ էի այդպիսի մտքերից հեռու մնալ, ցոյց էի տալիս նրա սպիտակ մազերը, նրա ընտանիքը: Բայց նա ժպտում էր: Դա նրա վարդափայլումն էր, բայց մի նոր բան, հեգնական, չար, անյայտ մի բան:

Եւ այդպէս էլ նա հետացաւ մեղանից: Վերջին անգամն էի նրան տեսնում: Մի անգամ էլ յետ դարձաւ նա, կրկնեց, որ ուրիշ ճար չը կայ և արագ անյայտացաւ արտի մարդահասակ հացարոյսների մէջ:

Չարմանալի հեշտ ելք գտաւ իմ կինը: Մի քանի օր աշխատեց, համաձայնութիւն ստացաւ և Մարթային հանեց հօր տանից, ուր նա օր ու գիշեր բանտարկվածի պէս էր, տարաւ իր հետ զաղաք: Մի տարուց աւել նա մնաց մեր տանը: Համեստ, ամաչկոտ, վերին աստիճանի աշխատասէր մի կին էր և ես չէի հաւատում, թէ նրա մէջ այնքան տանջանքներ տանելու հերոսութիւն կարող էր լինել: Նա բացվում էր հետզհետէ. իր լեռների կարօտն էր միայն երևում նրան: Բայց ստիպված էր խեղդել նրան, գիտէի, որ գնալ անկարելի է: Բայց խեղճ չը գիտէր, որ գրանով փութացնում էր մի սարսափելի գրամա: Նրա առմուտնը աւելի ևս խայտառակվեց. այժմ նրա կինը հօր տանը չէր ապրում, այլ քաղաք էր գնացել և այնտեղ, ի հարկէ, աւելի էր շնութիւն անում: Պետրոսն և նրա թշնամութիւնը ծայրայեղութեան հասաւ: Պետրոսը շարունակ կրկնում էր ամեն տեղ, թէ արեւն պիտի թափվի: Եւ մի օր լուր հասաւ, թէ նրա արեւն է թափվել. նրան գտել էին գիւղի ձորում գնդապետը եղած:

Ձերբակալվեց նրա փեսան, ըննիչը հաստատեց, որ նա է ոճրագործը: Նա ուզում էր ծերունուն սպանելով վերացնել արգելքը, բայց բոլորովին ուրիշ բան ստեղծեց իր գնդակով: Նրան տարան Սիբիր: Մարթան ազատ էր:

Նա գնաց գիւղ իր հօրը ողբալու, գնաց հօրը փոխարինելու իր աշխատանքով...

Լէօ

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ: Հեռագրով լուր ստացած լինելով, Տոկիոյի ռուսական զինուորական գործակալը հաղորդեց, որ եսպոնական բանակը զենքի կոչելու պատճառով նորից նախապատրաստական միջոցներ են ձեռնարկվել զէպի հիւսիս զորք ուղարկելու համար:

ՍՕՖԻԱ: «Державный Вѣстник»-ում յայտարարված է իշխանի անձի և նրա ընտանիքի զէմ արված յանցանքների մասին օրէնք:

19 յունվարի

ԼՕՆԴՕՆ: Վիկերս Մարքիս Բարրոն և Ամստերդը Նիդալանդում ֆիրմաները պատէրներ ստացան հնարաւորութեան չափ շուտ ժամանակամիջոցում կառուցանել երկու կատարելապէս զինուորական նաւեր Եսպոնիայի համար. իւրաքանչիւր նաւը կունենայ 16,400 տոնն և 19 հանգոյցային արագութիւն և զինաւորված կը լինի աւելի լաւ, քան անգլիական զինուորական նաւատորմի առաջնակարգ ռազմական նաւերը:

ՏԵՆԻՑՁԻՆ: («Բէյտերի գործ»): Ռուսաստանը յունվարի 17-ին գնեց 20,000 տոնն կայպինեան քարածուխ: Իւանշիկայ, ի նկատի ունենալով պատերազմ ծագելու հնարաւորութիւնը Ռուսաստանի և Եսպոնիայի միջև, մեծացնում է Պէլէրեան նահանգի և Մանչուրիայի միջև եղած սահմանի պաշտպանութեան համար զետեղած զօրքերի թիւը 40,000-ով: Շան-սի և Շան-դուն նահանգների զօրքերի կազմը նոյնպէս մեծացնում է:

ԼՕՆԴՕՆ: («Վոլֆի գործ»): Որովհետև, որքան այստեղ յայտնի է, Տոկիոյում առհասարակ զեն ևս չէ ստացված ո՛ր մի պատասխան Ռուսաստանի կողմից, ուստի բնծ գգուշութեամբ պէտք է վերաբերվել նրա ռուսազինութեան մասին տարածված բոլոր կոմերցիաներին: Ինչ վերաբերում է տպաւորութեանը, որ պէտք է գործէ Եսպոնիայի վրա ռուսական յայտադիրը, պէտք է չը մոռանալ, որ վճռի վրա ազդեցութիւն կունենայ ոչ միայն տոնը, այլ և նրա բովանդակութիւնը:

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ: «Новый Край» լրագրի աշխատակիցը Կորէյում հաղորդում է, որ եսպոնացիները զանազան խորամանկութիւններն են դիմում՝ Կորէյում անկարգութիւններ առաջացնելու և միջամտելու առիթ ունենալու համար, սակայն զրա համար բոլոր հնարված պատրուկները անազող էին. չաղովից լուրջ անկարգութիւններ առաջացնել Մոկայում: Լուր էր տարածված, թէ Մէուլի բերդապահ զօրքը զինուորական ունի ապստամբելը, որպէս զի ստիպել կայսրին փախչել ռուսաց միասխան. այդ լուրի հետևանքն այն եղաւ, որ կայսրը վճռեց հարկաւոր զէպքում փրկութիւն որինեկ ամէրիկացիների մօտ, որի համար Ամէրիկան, միսսիսն պաշտպանելու պատրուակով, զինուորների մէկ ամբողջ վաշտ մտցրեց: Եսպոնացիները դիմելին սօսնակներին՝ միջամտութեան առիթ ստեղծելու համար: Օրվապետ Ալէքսէեւի կարծաւոն հիւանդութիւնից յետոյ՝ վերսկսեց իր սովորական ընդունելութիւնը:

ՏԵՆԻՑՁԻՆ: («Բէյտերի գործակալութիւն»): Ռուսաստանն աշխատում է 30,000 տոնն կայպինեան անուխ գնել, որը պէտք է մի քանի օրից յետոյ հասցնվի Պորտ-Արտուր:

ՍՕՖԻԱ: (Դիմադրական շրջաններից): Կառավարութիւնը առաջարկեց ազգային ժողովին 300,000 ֆրանկի կրէդիտ ուղղել փախստականներին օգնութիւն հասցնելու համար:

ՎԼԱԴԻՎՈՍՏՕԿ: Լուր է պտտում, թէ այս օրերս սպասվում է պահեստի զինուորների մօբիլիզացիայի յայտարարումը՝ Հեռու Արեւելքի բոլոր շրջաններում: ձիերի մօբիլիզացիան արված է: Փետրվարին սպասվում է 50,000 մարդուց աւելի Վլադիվոստօկ գալուստը բերդապահ զօրքը ուժեղացնելու համար:

Խմբագիր: ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՍԻԼԻՍԻ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՄԷԼԻՐ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Գոտտեկերդ“

գրախանութում վաճառվում է

„ԴԱԻԹ ԲԵԿ“

Բաֆֆի:

Երեք հատորը միասին արժէ. . 3 ռ. 50 կ. Շեքի կաշի կազմով . . . 4 » — »

Չօտի ծախք պէտք է ուղարկել. — 50 »

Դիմել. — Թիֆլիս. Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустянь. 2—3

ՎԻԷՆԱ, ԲԺ. Պ. Մ. ԱՓՐԻԿԱՆ

կազմում է խորհուրդներ տեղիս մասնագէտ-պրօֆէսորների հետ Ռուսաստանից եկող հիւանդների համար. հասցէն: Wien, Spiegelgasse, 3, IV stock. 1—3

ՄԱԿԱՐ ԵԿՄԱՆԵԱՆԻ

բառաձայն պատարագի արարողութիւն ձեռք բերել ցանկացողները պէտք է դիմեն նրա խնամակալ Ադամ Եկմալեանին: Հասցէն. сел. Багашапатъ, Адаму Екмалянъ. 1—3

լոյս տեսաւ № 7
ՇԱՀՐԻԱՐԻ

ԵՂՕԻ ԳՈՌ ԲԱՆՏԸ

24 էրես, գինը 3 կօպ.

Դիմել գրավաճառներին: 1—3

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ

Ա.Ձ.ԲԻ ՀԻԻԱՆ ԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Հնդուներութիւն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյան » 5-ից մինչև 7

Վերաբերվող փ. № 16, տուն Եղիազարեանի: 42—100

ԵՐԴՈՒՆԱԼ ՀԱՄԱՏԱՐԱՐՏԱՐ

ՋԱԻԱԴ ԲԵԿ ԲԱՆՈՒՆԵԱՆ

ՌՕՍՏՕՎԻՑԴՅԻ վրա տեղափոխվել է ԱՐՄԱՎԻՐ և ընդունում է գործեր՝ իր մասնագիտութեան վերաբերեալ: Հասցէն. Армавиръ, Кубанской области. Присяжному Повѣренному Джебаль Бекъ Валуянъ. Телефонъ № 159. 2—5

Լ Ո Յ Մ Ե Ն Ա

2-րդ տպագրութեամբ (փոփոխված)
Կ. ԿՈՒՍԿԵԱՆԻ և Լ. ՄԱՐԳԱՆԵԱՆԻ

Կ ա ղ մ ա ծ

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍԳ

ԸՆԹԵՐՏԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Երրորդ և չորրորդ տարիների համար
Համառոտ հայերէն-Ռուսերէն բառարանով
Գինն է 70 կօպ.

(246 էրես)

Դիմել՝ Թիֆլիս «Մուրճի» խմբագրատան կամ «Դուտտեկերդ» և «Կենտրոնական» գրավաճառատոցներին: 100 օրինակից աւելի քանակութեամբ ձեռք բերողներին 20% զիջում: 4—5

Երկու երեխաների մօտ պահանջվում է Մօսկվայում հայերէն լեզուն լաւ իմացող մի հայուհի: Հասցէն. Արաւ-Արաւեան հրատարակ., տ. Միլիտանովի, բնակ. Շահապարեանցի: 2—3 (չար. 2 անգ.)

Սարգիս Մարիկեանցի

«Հ. Ա. Վ. Ա. Ն. Ա.» ծխախոտեղէնի վաճառատուն, Թիֆլիսում, Դոյզլիսկի փողոց № 3: Առաջարկում է յարգելի ծախողներին և գաւառացի վաճառականներին նորաբաց «Հ. Ա. Վ.» գործարանի ծխախոտեղէն ապրանքը գործարանի գներով: Պահեստ Շոֆէրի և Ռէնգարտի սիգարեղէն ապրանք: Կաշեայ ծխախոտի տուփեր, պորտամաներ և բումաժիկներ. քահարարեայ, փայտեայ և փղոսկրեայ մուշտուկներ ամենամատչելի գներով: 2—3

Պատիւ ունեկ ծանուցանելու յարգելի հասարակութեան, որ Միջին-փողոցում կաթօրկայ եկեղեցու հանդէպ բացել ենք մարտի և հանրա-մատչելի գներով: 2—3

ՃԱՀԱՐԱՆ «ՀԱՄԻՐԱՄ»

Պատրաստվում է երօպական և առիական կերակուրներ, քաղցրեղէններ և խմորեղէններ. նաև ընդունում ենք «պաշտնաներ» ամսականներ և բաց ենք թողնում տներում:

Յարգաւոր. Գաղապար Տէր-Յովհաննիսեան, Խորէն Մարտիրոսեան 2—5

ԳՐԻԳՐԻՅ ՄԱՏՎԷՎԻԶ

Ի Օ Խ Վ Ե Պ

Հնդուներութիւն ատամների և բերանի խոռչի հիւանդութիւնների, ատամ հանելու, բժշկելու, պլումբ անելու, մաքրելու և արհեստական ատամներ շինելու:

Հասցէն. Михайловская ул., № 108, противъ Кирки: Հնդուներութիւնը առաւօտեան 10-ից մինչև երեկոյան ժամի 7-ը: 11—30

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

գրողների, գիտնականների, պատմական գործիչների, գիտութիւնների, գրականութիւնների և երկիրների—համաշխարհային և կովկասեան ու հայկական՝

(Մօս 1000 էջ ևս մօս 350 պատկերներով)

խմբագրութեամբ և հրատարակութեամբ «Հանրամատչելի Գրադարանի» հրատարակիչ Հ. Ա. Ուսիլեանի, նմանողութեամբ Պալլենկովի «Энциклопедическій Словарь» և ֆրանսերէն Dictionnaire—Manuel Illustré des Ecrivains et des Littératures հրատարակութիւնների:

Հանրագիտական պատկերազարդ բառարանը կարեւոր օժանդակ և օգտակար տեղեկատու կը լինի ամեն մի ինտելիգենտ և ինֆանտրուքեամբ գրողի ու անձի համար: Բացված է բաժանորդագրութիւն. գինն է մինչև ըստ արանի լոյս տեսնելը—4 ռ., լոյս տեսնելուց յետոյ 5 ռ., կազմով,—որ կը լինի չքեղ և գեղանկար—1 ռուբլի աւելի: Ճանապարհածախսի համար պէտք է վճարել 50 կ., իսկ կազմածների համար 70 կ.: Կարելի է վճարել մաս-մաս—2 ռ., և յետոյ 2 ռ. 50 կ.: Պէտք է դիմել բացառապէս՝ կազմող—հրատարակիչ Հ. Առաքելեանին այս հասցեով. Թիֆլիս, խմբ. «Մշակ»-ի, Тифлисъ, Редакция «Мшакъ».

Ոովհետև Հանրագիտական Բառարանի տպագրութեան ծախքը մեծ է, ուստի քիչ քանակութեամբ է տպվելու, այդ պատճառով, ցանկալի էր, որ ստորագրողները շտապէին մինչև մայիս ամիսը յայտնել:

1—3

„Ստորոգնիկ“ Գրախմբատանցը

(Մ. Ա. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ) ԲԱԳԻՌՈՒՄ

պատիւ ունի առաջարկել իր ծառայութիւնները հայ հեղինակներին և հրատարակիչներին նըրանց աշխատութիւնները վաճառելու գործում:

Պայմաններ և առաջարկութիւններ խնդրում ենք հաղորդել հետեւեալ հասցեով՝ 1—5
Баку, Марш Сундукянцъ. չ. 4.

ԲԱՅՎԱԾ Ե ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1904 թ.

ՄՈՒՐԴ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

(Լուր շրջան IV տարի)

Խմբագրութեան և աշխատակիցների նոյն կազմով:

Բ Ա Յ Վ Ա Շ Ե Բ Ա Յ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Ռուսաստանում տարեկան 10 ռ., կէս տարին 6 ռ., 1 ամսուան 1 ռ.: Արաստանում տարեկան 12 ռ. (32 ֆ. կէս տարին 7 ռ. (18 ֆ.), 1 ամսուան 1 ռ. 20 կ. (4 1/2):

ԲԱՅՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՐՄ Ե

Թիֆլիսում—խմբագրատանը (ձայնավաճառ փողոց, տ. № 16):
Կաթողիկոսի ալ սեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «Мурчъ».
Արաստանումից՝ Тифлисъ, Редакция de la revue «MOURTCH».

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆԻ ԳՐՈՒԾԱԿԱՆԵՐ

Նուրդա—Գ. Յակոբ Սոաթի, Zurich (Suisse), Weinbergstr. 103, Hagop Aghassier. Պարսկաստան—Թեհրանի հայոց գրքոցների տեսուչ պ. Լևոն Բաբայան: Եգիպտոս—Դոկտոր Գ. Փաշայան. Ալեքսանդրիա.

Բաժանորդողին կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.—կամ՝ սկզբում 5 ռ. և յուլիսի 1-ին 5 ռուբլի: Դրավաճառներից մաս-մաս բաժանորդագրութիւն չի ընդունվում:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով ճառարարութիւնների համար վճարում են—1 էրես ընդոյ յայտարարութեան համար 15 ռ., 1/2 էր.—8 ռ., 1/4 էր.—4 ռ.: 3—5

ԾԱՂԵՍԱՅ ՕՂԸ-ԿՕԼՕՆ

„ՀՈՏԵԼԻՏ ԿԱԿԱՉ“

Գ Ե Ղ Ե Գ Ի Կ Ս Ր Ո Ւ Ա Կ Ո Ւ Մ

ՇԱՏ ՀԱՃԵԼԻ ՀՈՏ

Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ն

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

4—6 (օ. 25, հ. 28, դ. 28, փետր. 25, ապ. 25, յուն. 25) (Метцль). 148, 168,

Կենտրոնական գրախմբատանցում

Վաճառվում են հետեւեալ նոր գրքերը՝

Անդրեյ Լեոնով, Օտարագրի, ռուս. թարգմ. Տ. Յովհաննիսեան, Թիֆլիս, 1903 թ. գ. 10 կ. Արամ Չարպ, Բանաստեղծութիւններ, մտավառ թոթովանքներ, Վենետիկ, 1900 թ. գ. 1 ռ. Բաբուրեան Հ., Դերասանուհի և դերասան, փողովի 1 գործ., Թիֆլիս, 1904 թ. գ. 20 կ. Գորկի Մ., Մակար Չուբրա, Թիֆլիս, 1903 թ. գ. 10 կ. Էյմոն Թեռի, Վարժապետը, ֆրանս. թարգմ. Լևոն Մ.-Աղ., Թիֆլիս 1902 թ. գ. 5 կ. Թառապեան Ս., Թաղաված կայծեր, դրամա 5 գործ., պատկերազարդ, Բաղու, 1903 թ. գ. 1 ռ. Լեո, Թաթախման գիշերը, երկրորդ տիպ, Թիֆլիս. 1903 թ. գ. 5 կ. Լուկեկիլի Վ., Բնութեան երկու մեծ թաղաւորութիւնները, պատկերազարդ, Պետերբուրգ, 1903 թ. գինն է 30 կօպ.

Համբարձումեան Հ., Արիւն—Էջեր, Բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1903 թ. գ. 15 կ. Մանիակալ ընմ, Գաղթականներ, Թատրոնական պիէս, Թիֆլիս, 1904 թ. գ. 10 կ. Մելիք-Թանգեան Ն. Վ., Հայոց եկեղեցական իրաւունքը, Շուշի, 1903 թ. գ. 1 ռ. 50 կ. Նաժմիլի, Լեզնուր, Թիֆլիս, 1903 թ. գինն է 7 կօպ.

Նաւասարդեան Տ., Բաղդիւր Արարատեան բարբառի (մօտ 5009 բառ ու ոճ), Թիֆլիս, 1903 թ. գինն է 50 կօպ.

Նեպիլիս, Իւնչ և ճշմարտութիւնը, թարգմ. Մամբրէ վարդ., Վաղարշապատ. 1903 թ. գ. 10 կ. Նիկոլիս, Հրաման, պատմութեամբ, 1 պատկերով, 2 նկարով, Թիֆլիս, 1903 թ. գ. 5 կ. Շահան-Սիմոն, Ս. պատարագի երգեցողութիւն յաւելուածով, Բ. տիպ, Թիֆլ. 1903 թ. գ. 20 կ. Ուղեցոյց տարրական ճախագրութեան, Մօսկվա, 1903 թ. գ. 40 կ.

Շիրվանզադէ, Արտիստը, Թիֆլիս, 1903 թ. գինն է 15 կ.

Պոսեան Պ., Սօս և Վարդիթեր, վէպ, գ. տիպ, Բաղու, 1903 թ. գինն է 1 ռ. 20 կ. Սեմ-Իլի, Բու, պատկերազարդ մանկական գրութեամբ, Պետերբուրգ, 1903 թ. գ. 12 կ. Փախաղեան Վ., Ապաւոտ, պատմութեամբ, Թիֆլիս, 1903 թ. գ. 15 կ.

» Ասի, վէպ պարսկական կենսաբից, հեղինակի պատկերով, Թիֆլիս, 1903 թ. գինն է 30 կօպ.

» Գամալեան Ս., Երկու արեւելացի, զրոյց, Բ. տիպ, Բաղու, 1903 թ. գ. 30 կ.

» Շէն թաղաւոր աղջիկը, հէքիաթ, Բ. տիպ, Բաղու, 1903 թ. գ. 25 կ. Օմկոե էլ., Սպիտակ ծաղիկ, թարգմ. Ս. Շահվերդեանց, Թիֆլիս, 1903 թ. գ. 5 կ. Դիմել. Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. 2—3